ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2025 թվականի N 1525 - Ա

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՕԳՏՎԵԼՈՒՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 1529-Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի ապրիլի 25-ի N 611-Ա որոշման N 2 հավելվածի 1.13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հրաժարվել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող՝ 1,357,600 (մեկ միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) հատ, յուրաքանչյուրը՝ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից օգտվելուց:

2. Լիազորել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը Հայաստանի Հանրապետության կառավարության անունից իրականացնելու բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքից օգտվելուց հրաժարվելու 1-ին փուլով նախատեսված գործընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

30.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ